Ձև N 5.5

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ N 1/Ա 1

հերթական համարը

ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ ԾՐԱԳՐԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՆԱԽԱԳԾՄԱՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Քաղաքաշինական ծրագրային (տարածական պլանավորման) փաստաթղթերի մշակման նախագծային առաջադրանքը հաստատելու վերաբերյալ (ՀՀ վարչապետի 2009 թվականի դեկտեմբերի 22-ի N 1064-Ա որոշմամբ ստեղծված միջգերատեսչական հանձնաժողովի եզրակացությանը)

1. Հանձնաժողովը տալիս է դրական եզրակացություն՝ ՀՀ Կոտայքի մարզի Կոտայք-9 միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթերում ներառված Գառնի համայնքում գտնվող բնակավայրերի (Գառնի, Գեղարդ, Գեղադիր, Գողթ, Ողջաբերդ, Հացավան) գլխավոր հատակագծերի քաղաքաշինական ծրագրային (տարածական պլանավորման) փաստաթղթերի մշակման նախագծային առաջադրանքին:

2. Հիմք ընդունելով սույն եզրակացությունը՝ Գառնի համայնքի ղեկավարին առաջարկվում է քաղաքաշինական ծրագրային (տարածական պլանավորման) փաստաթղթի մշակման նախագծային առաջադրանքը սահմանված կարգով ներկայացնել ավագանու հաստատմանը:

3. Հետագա գործառույթներն անհրաժեշտ է իրականացնել ՀՀ օրենսդրության պահանջներին համապատասխան:

4. Հետագա գործառույթներն անհրաժեշտ է իրականացնել հաշվի առնելով ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների և ՀՀ շրջակա միջավայրի նախարարությունների գրություններով ներկայացված պահանջները (կցվում են):

Հանձնաժողովի նախագահ՝		
		Ե.Վարդանյան
Հանձնաժողովի քարտուղար՝		
		Լ. Առաքելյան

Երևան, «9» «հունիսի» 2026թ.